ՆԵՓԻԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԷԻՆ

Երբ հարություն առած Փրկիչը այցելեց Նեփիի արդար ժողովրդին, Նա հրավիրեց նրանց, «շոշափել բևեռների նշանները» Իր ձեռքերի ու ոտքերի վրա: Նա ցանկանում էր, որ նրանք իմանային, որ Ինքն էր «ամբողջ երկրագնդի Աստվածը և սպանվել [էր] աշխարհի մեղքերի համար» (3 Նեփի 11.14): Բազմությունը Հիսուսի մոտ գնաց մեկ առ մեկ: Հիսուս Քրիստոսի հետ անձնական փորձառություն ունենալուց հետո նեփիացիներն իմացան, որ Նա Փրկիչն էր, որի մասին գրվել էր մարգարեների կողմից (3 Նեփի 11.15): Չնայած Հիսուս Քրիստոսը ֆիզիկապես չի կանգնում այսօր մեր առջև, այնուամենայնիվ մենք կարող ենք անձնական խոր փորձառություններ ունենալ Նրա հետ:

Նեփիացիների նման ես կարող եմ գալ Քրիստոսի մոտ, սովորել Նրա մասին, և ամրացնել իմ վկայությունը Նրա վերաբերյալ:

ԵՎ ԵՍ ՆՈՒՅՆՊԵՍ

Դիտեք տեսանյութ մարդկանց փորձառության մասին այստեղ:
(Հնարավոր է առկա չլինել բոլոր լեզուների համար:)